ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 21, 2023

Առանցքային տվյալներ.

101,848 **փախստական է եկել Հայաստան**

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

12,845 անկողնային սպիտակեղեն

12,083 ծածկոց

12,167 բարձ

4,583 ներքնակ

3,919 ծալովի մահճակալ

1,399 խոհանոցային հավաքածու

3,583 հիգիենայի հավաքածու

Ֆինանսավորում.

14.6 մլն ԱՄՆ դոլար

է պահանջվում 2023- 2024 թթ., այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 49%

Պակասող ֆինանսավորում՝ 51%

7.2 մլն ԱՄՆ դոլար

է ստացվել առ 2023 թ. նոյեմբեր 21-ը

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

Մեկ ամիս է, ինչ Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիրը (ՓԿԱԾ) մտել է իրականացման փուլ, եւ դոնորների առատաձեռն նվիրատվություններն արդեն իսկ գործընկերներին հնարավորություն են տվել կենսականորեն անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Հայաստանում ապաստան գտած 101,848 փախստականներին:

Այսուհանդերձ, ՓԿԱԾ համար պակասող ֆինանսավորումը ներկայում կազմում է 78 տոկոս: Ձմռանն ընդառաջ՝ կենսական օգնությունը շարունակելու համար անհրաժեշտ է դոնորների կողմից հրատապ ֆինանսավորում:

ՄԱԿ ՓԳՀ արձագանքումն արտակարգ իրավիճակին

Փախստականների պաշտպանություն

- ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության մշտադիտարկում է իրականացրել Երեւանում եւ տասը մարզերում բնակվող **2,763 փախստականների (571 ընտանիք)** շրջանում: Առավել կարիքավորներին ՄԱԿ ՓԳՀ-ն ուղղորդել է իր գործընկերներին՝ ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) աջակցություն ստանալու համար: Հաշվետու շաբաթվա ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ն ամրապնդել է միջգործակալական ուղղորդման եղանակները՝ որպես արձագանք պաշտպանության մշտադիտարկման ընթացքում արձանագրված՝ փախստականների կարիքների:

- ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին փախստականներից **1,740 հեռախոսազանգ** է ստացվել, որոնք հիմնականում վերաբերվել են կացարանի, ֆինանսական, պարենային, հիգիենայի պարագաների, կենցաղային սարքերի, անկողնային պարագաներ եւ հագուստի կարիքներին:

Լոռու մարզ. ՄԱԿ ՓԳՀ-ն եւ պետական մարմինները տնային այցեր են կատարում՝ ծանոթանալու փախստականների կարիքներին: ©UNHCR

- Չորս համալսարանների՝ իրավագիտություն սովորող **25 ուսանողներ** մասնակցել են արդեն 12-րդ տարին անցկացվող «Փախստականների իրավունք» դպրոցին, որը կազմակերպվել էր ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի, Երեւանի պետական համալսարանի եւ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության համատեղ ջանքերով: Եռօրյա դպրոցի նպատակն էր զարգացնել տարբեր բուհերի իրավաբանական կլինիկաների կարողությունները՝ անհատույց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու հարցերում:

Ապաստան եւ ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- Մինչ օրս, ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով ՀՀ տարբեր մարզերում բնակվող **12,845 փախստականի (3,583 տնային տնտեսություն)** տրամադրել է 58,561 ՈՊԱ: Վերջին շրջանում բաշխումն իրականացվել է Լոռու, Կոտայքի, Շիրակի եւ Տավուշի մարզերում

Համակարգում

- Շուրջ 30 մասնակից ներկա էր ՄԱԿ ՓԳՀ եւ ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի կազմակերպած՝ դոնորների համակարգման երկրորդ հանդիպմանը, որտեղ բարձրաձայնվեցին մեկ ամիս առաջ մեկնարկած՝ Փախստականների կարիքներին արձագանքման ծրագրի (ՓԿԱԾ) ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու խնդիրները: Հանդիպման ընթացքում ոլորտների պատասխանատուները ներկայացրին իրենց ոլորտի զարգացումները, մասնավորապես փախստականների պաշտպանության, առողջապահության, կրթության, դիմակայունության, ՈՊԱ-ի/կացարանի/սննդի հարցերում:

- Գենդերային հիմքով բռնության (ԳՀԲ) դեմ պայքարի ենթաոլորտային աշխատանքային խումբը, որի ղեկավարներից է ՄԱԿ ՓԳՀ-ն, քննարկեց 2023 թ. հոկտեմբեր – 2024 թ. մարտ շրջանի Ռազմավարությունն ու աշխատանքային ծրագիրը, որի նպատակն է ԳՀԲ կանխարգելման, նվազեցման եւ միջամտությունների ուղղորդման ընդհանուր շրջանակ ստեղծել՝ ի պատասխան Ղարաբաղից փախստականների ժամանմանը Հայաստան:

- ՄԱԿ ՓԳՀ-ն վերջերս հրապարակեց Միջգործակալական ընթացիկ ամփոփման թիվ 6 թողարկումը, որտեղ նկարագրված են արտակարգ իրավիճակին արձագանքման առանցքային զարգացումները 2023 թվականի նոյեմբերի 8-ից 14-ի ժամանակահատվածում:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Ավստրալիա | Բելգիա | Կանադա | CERF| Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Լեհաստան| Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել. UNHCR Armenia, armye@unhcr.org, www.unhcr.org/am